

բարձրանայ Ս. Եկեղեցւոյ ամենաւ թենք որ Աստուած չնորհէ զինքն ընդ-  
բարձր գահուն վրայ իրեւ փոխանորդ երկայն աւուրս և յամայր ամն ճշշ-  
ջիսուսի Քրիստոսի, ծմարիտ Հայր մարտապէս օրհնեալ և օրհնութիւնա-  
և անսխալ լուսաւորիչ և ուզդիչ հա- բեր Հայր և Պահապան:  
ւասացեալ ժողովրդոց և առաջնորդ  
Ս. Եկեղեցւոյ, որուն համար կը մաղ-

Հ. Յ. ԱհԳԵԲ

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Կը մեկոնք, կէս գիշեր է: — Ծոյլ դանդաղկոտ է երիվարն,  
Անեւներուն վրայ խախուս կը տատանի կառքն երերուն.

Օ՞ն, մըտրակէ, կառավար...

Աներկիւդ ու գուարթ որդիք մնեք դիպուածին մեզի համար  
Սպառնալիք չունի անտառըն, չունի ստուերը վըտանգներ,  
Քարեր չունի ճանապարհ:

Քուն, թագուն է ամէն բան — օ՞ն, մըտրակէ, ո՞վ կառավար...  
Կը դիտէ ամպէ մը գուրս լուսին հեզնի ծիծաղելով.

Ալոր չարամիտ, դաշտավայրին վրայէն նըսեմ

Լըրտենելզ կ'երթայ նա:

Դէպ ի սպօղուած երկինք ծառերը ծուռ ոստերը կ'երկողնցնեն,  
Գալարուած կըմախօներու աղօթարար թենրու պէս.

Ի՞նչ կը պատմես, ո՞վ անհուն...

Սպանորակ, ամպէ մը դուրս, լըրտենելով կ'երթայ լուսին:

Կանգուն, յուզուած և գունաս, աչքս անքըթիթ և մոլորուն,  
Ես, մագերս տըւած հովին, վրհն կը հարցընեմ:

Կ'ընկլուզանէ աղջամուղջն

Հոգիներու ազօթքն ու քէն, սիրոզներու շուրթին համբոյրն,  
Երազն, ոճիրն և արցունքը, զըգուումները ինչածափ  
Թունաւորուած սէրերու:

Խաւարին մէջէն կ'անցին հասաշանքներ և սարսուսներ...

«Ի՞նչ կ'ընես, ի՞նչ կ'ուզես...» Կը հարցնեն ինձ՝ անսուրք փոսէն  
Ելած խօլ բոցիկներ՝ ցած որմերու մօա թափասիկ

Սիսելոցի մը մըթին:

Չեմ գիտեր, կը փրնուեմ բալլն: Ուղին թէկևս անվախճան է:  
Անվախճան թէկևս զիշերն. հոգ չէ: Ունիմ արիութիւն:

Օ՞ն, մըտրակէ, կառավար...

Ես ձեզմէ չեմ վախընար, մեռելոցի խօլ հոգիներ:

Թըմբրալից դատարկութեան խաղաղաւէտ լըռութեան մէջ,  
Խորհրդաւոր պահանորդ, մարգկային միտքը կը հըսկէ,

Նըման անման հրեշտակիւ:

Կը հըսկէ, և թևազգեաց յանդըգնութեամբ և երազով  
Կոյր երկրին քովէն կ'անցնի և ամպերուն արծաթափայլ,

Գաղափարին և փոսին:

Փլատակներուն վրայ, ո՞վ միտք, իբրև անմահ հրեշտակ հըսկէ:

ԱՏԱ ՆԵԿՐԻ

# Ա Ն Ա Ն Ո Ւ Ն

▷ □ ◇

Ես անուն չունիմ — խոհաւ խըլխըլուկ տան  
Աղջիկն եմ ես գոռնիք.  
Անիծեալ է ընտանիքու և գատազգի,  
Բայց իմ մէջըս կը բունուի բոց մ'անըլուն  
Անըզգամ զաճան մ', հրեշտակ մ'ազօթաւոր  
Կը հետեւնի քայլերուս;  
Լիսն ու դաշտ իմ մըստածումըս կ'արշաւէ,  
Մածէպափ պէս բոցալունչ ձիռն վըրայ:  
Աւեղծուած մ'եմ ես սիրոյ ուսակութեան,  
Անուշութեան և ուժի.  
Անդանդին զիս աղջամուզը կը քաչէ,  
Կը յուզուիմ երբոր մանկիկ մը փայփայեմ:

Թարգմ. Հ. Արիստակիս Վ. Քասպահտիկեան

Կը ծիծղամ, երբոր մըտնէ գրժբաղդութիւն  
Իմ արնակիս գուռնէն ներս.  
Կը ծիծղամ, երբ ընկւցիկ եմ և նեղուած,  
Անըսփոփ և անզրւարթ, կը ծիծղալիմ:

Սակայն խոնջ և դողուշուն ծերերու վրայ,  
Հացկարօտին վրայ, կու լամ.  
Կու լամ հիծ արդեկներու վրայ և նիշար,  
Անծանօթ բիւր վիշուրու վըրայ, կու լամ:  
Եւ երբ լացը սրբուս դուրս կը զեղանի,  
Խիզախ երգովս ուանսովոր,  
Որ կուրծիս մէջ և բերնիս վրայ կը թըրթուայ,  
Կը նետեմ բոլոր հոգիս պատառ պատառ:  
Հնգըս՝ զայն ով որ լըսէ. և վաս նախանձ  
Եթէ ծեծէ զիս, իսայթէ,  
Կ'անցնիմ բաղդը գըրգուելով և շնչ նայիր,  
Եւ ինձ չի հասնիր պլափը թունաւոր:

ԱՏԱ. ՆԵԿՐԻ

# Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ի Գ Ո Ր Ծ Ե Ր

Մ Ե Ր Ս Է Զ

Ամէն ցեղ ունի թանգարան մը ուր կը ցուցադրէ իր ազգային  
տաղանդներու գեղարուեստական գործերը: Մ'ենք մեր հողէն օտարացած  
ենք, ու մեր գեղարուեստի նզր ներկայացուցիչներն ալ օտար աստղե-  
րու տակ կ'ապրին: Վենեստիկի միջազգային ցուցահանդէսին մամուլի  
տեսուչը իմ մէկ բողոքիս վրայ կը պատասխանէր ինձի. « Չաչինը  
կ'անուանենց թուրք արուեստագէտ, զի թուրքիայէն է»...: Եւ սակայն  
այդ ցուցահանդէսին մէջ ծագումէն սկսեալ մինչև ցայսօր ոչ մէկ թուրքը  
մահմետական արուեստագէտի զործն է ցուցադրուած: Դարձեալ հայն  
էր որ թուրք գեղարուեստի ներկայացուցիչն կ'ըլլար: Մ'ենք ունինք  
արուեստագէտներ, սակայն ունինք արուեստի զլուխ գործոցներ որոնք  
անկախօրէն թարգմանն ըլլան զուտ հայկական հանճարի: Աչաւասիկ  
կէտ մը որ մտածել կու տայ: Կերմանիան ունի իր կլիւցը որ կը  
ներկայացնէ իր ցեղին տպաւորիչ երածշատութիւնը, և խտակիան ունի  
իր Վէրտին՝ որ ցեղին անոյշ զգայնութեան թարգմանն կ'ըլլայ: Եւ  
կ'ըսենք, թէ գերմանական երաժշտութիւնը առհասարակ մաթեմաթի-  
բական ազդեցութիւն մ'ունի, իսկ խաւականը հոգեյոյզ զգացմունց:  
Ուրեմն երկու ցեղերուն մէջ արուեստը իր յատուկ գոյներով յայտ-  
նուած է: Մ'ենք ունինք արուեստագէտներ, բայց ո՛չ մէկը կարող է  
ներկայացնել ամրող ցեղին յատկանից գեղարուեստական ընդհանրա-  
կան հանգամանքը: Խօսքա ժամանակակից գեղարուեստի մասին է, ան-  
տարակոյս մեր հին ճարտարապետութիւնը, և հին երգեցողութիւնը և